

Կ Ի Ն Ե Ր Ո Ւ Ն

Քրսան տարի, քրսան տարի շարունակ
Ձեզ սիրելէն եղայ մերք վատ, միշտ դժբաղդ,
Ու միամիտ՝ դեռ կը յուսամ որ ձեզմով,
Միայն ձեզմով կըրնամ ըլլալ երջանիկ:

Կը կարծէի որ ձեր կախարդ իզուրեւամբ
Բընութենէս խաւը կ'իյնար բըրտութեան,
Կը չըմանար բընագդիս մէջ շարութիւնն
Ու կը դադրէր մէջըս մեղփին հըրապոյրն:

Կը խորհէի որ ձեր խընամփն ու գըզուանփն
Ապրումիս մէջ բարիք պիտի դընէին,
Երանութիւն պիտի ըլլար աշխատանփն,
Հանոյ՜ք՝ խոնջէնփն, հեշտանփ՝ ամէն մըտածում:

Ձուր փընտռեցի ճակտին վըրայ ձեր անեղծ,
Սուգը՝ անվերջ չըկարենալ սիրելուն.
Երբեք չեղաւ որ ցաւէիք թէ ինչո՞ւ
Ժամանակէն կը պարտըի սէրը միշտ:

Ի՞նչ տըւիք ինձ: Ձեր համբոյրին մէջ հոգիս
Չըզգաց բընաւ հըպումը ձեր հոգիին.
Ինծի բերիք արտասուփներ որոնց մէջ
Տեսայ միայն ձեր տառապանփն անձնական:

Ձեր գրքերին մէջ զիս առանձին ըզգալուս
 Վրհատութիւնն ըմբռնել դուք չըկրցաք.
 Մըտերմութեան մեր ժամերուն, անհաղորդ
 Դուք մընացիք իմ եսին հետ լաւագոյն:

Ախորժեցաք քեքեւամիտ խօսքերէս,
 Կատակներէս ցանկալարոյց, անշնորհ,
 Ու քոյլ տըւիք որ պրդծեմ ձեր ներսիդին
 Երազներուս կիներ քննոյշ, վիպական:

Նախանձին տենդն՝ արիւնիս մէջ դո՛ւք դըրիք,
 Հարազատն է կասկածըս ձեր կեղծիքին,
 Աշխատանքէս դո՛ւք վերցուցիք ըսփոփանքն,
 Ու դուք եղաք պատմաւ անպէտ մընալուս:

Սակայն եթէ ձեզ սիրելն է տառապանք,
 Եւ ամօք է ձեր քրդանցքին շուքն ըլլայ,
 Ձեզ չըսիրելն անտանելի զըրկանք է,
 Զըրկանք մ'որ զիս կըրնայ ընել խելագար:

ՅՈՎՍԷՓ ՇԱՀԷՆ